ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝

ք. Երևան, Ալ. Մանուկյան 11

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

ՊԱՇՏՈՆԸ՝

«Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի դեկան» և «Մարզչամանկավարժական ֆակուլտետի դեկան»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐ՝ 09:00-17:30

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

- Հաստատում է բոլոր ուսումնական պլանները և ծրագրերը (բակալավրիատ, մագիստրատուրա, լրացուցիչ կրթություն), ուսումնական գիտակարգերի թեմատիկան, ատենախոսական, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները,
- Վերահսկում է ֆակուլտետին կից մասնագիտական ծրագրերի իրականացումը,
- Վերահսկում է ուսանողների միջանկյալ, եզրափակիչ, ամփոփիչ և ավարտական ատեստավորումը,
- Կարգավորում է ավագների գործունեությունը,
- Մասնակցում է ֆակուլտետի կադրերի ընտրության, վերադասավորման գործընթացին, ինչպես նաև զարգացման և կատարելագործման ծրագրերի իրականացմանը:
- Իրազեկում է ամբիոնի վարիչներին, աշխատակիցներին նրանց վերաբերող ինֆորմացիայի, առաջադրանքների վերաբերյալ, որոնք քննարկվում են ռեկտորատում և հետևում դրանց իրագործմանը,
- Կատարում է անմիջական ղեկավարի կողմից տրվող այլ հանձնարարականներ:

ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝

- Բարձրագույն կրթություն
- Պրոֆեսորի կամ դոցենտի կոչում՝ գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճանով
- Առնվազն 5 տարվա գիտամանկավարժական փորձ
- Հայերենի և անգլերեն կամ ռուսերեն լեզվի գերազանց իմացություն
- Համակարգչի իմացություն (MS Office, Internet tools)

ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ 24.03.2024թ.

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ՝

Հայտարարված մրցույթով հետաքրքրված անձինք «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժին են ներկայացնում կամ heghine.mitoyan@sportedu.am էլեկտրոնային հասցեին են ուղարկում հետևյալ փաստաթղթերը՝

1) Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ ամբիոնների կամ լաբորատորիաների կողմից առաջադրվելու դեպքում՝ որոշումը, ինքնաառաջադրման դեպքում՝ ռեկտորին հասցեագրված դիմումը,
2) առաջադրված թեկնածուների գրավոր համաձայնությունները,
3) ինքնակենսագրություն (CV),
4) բարձրագույն կրթությունը հավաստող փասթաթղթերի (վկայական, դիպլոմ, հավաստագիր և այլն) պատճեն(ներ)ը,
5) գիտական աստիճան(ներ)ը և գիտական կոչում(ներ)ը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը,
6) տպագրված գիտական, մեթոդական աշխատանքների կամ գյուտերի հաստատված ցանկը,
7) պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ տվյալներ, եթե առկա են:
8) թեկնածուի՝ ֆակուլտետի զարգացման 5 տարվա ծրագիրը (հայեցակարգ):